

## Տ. ՎԱՐԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1978 թ. դեկտեմբերի 3-ին Գյումրի քաղաքում:

1985-1994 թթ. սովորել է Գյումրիի Պետրոս Դուրյանի անվան թիվ 28 միջնակարգ դպրոցում:

1994-1997 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1997-2003 թթ. սովորել և ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2002 թ. դեկտեմբերի 26-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնում որպես գործավար քարտուղար:

2003 թ. դեկտեմբեր ամսից ծառայում է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

2004 թ. հոկտեմբերի 28-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պողոս Նուբար Փաշայի կյանքն ու գործունեությունը» թեմայով:

2005 թ. սեպտեմբերի 25-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: